



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Ո. ՆԵՆՐԻ
 ԿԱՐՍՐԱՍՈՐԹՆԵՐԻ
 ԱՌԱՋՆՈՐԴՈՒ






Ո. ՇԵՆՐԻ

ԿԱՐՄՐԱՄՈՐԹՆԵՐԻ
ԱՌԱՋՆՈՐԴԸ

Ռուս. թարգմ. զ. Ստեփանյան



ՊԵՏԼԻՍ

1934

ՅԵՐԵՎԱՆ

1942 A 8848
12451

Պատ. խմբագիր Ա. Հայրյան, Տեխ. խմբագիր Յ. Խաչվանքյան,
Լեզվական խմբագիր Ա. Առստամյան, Սրբագրիչ Ա. Տ-Մկրտչյան,
Հրատ. № 3056, Գլավլիտ № 8623 (բ), Տիրած 5000
Պատվեր № 215: Հանձնված է արտագրության 9 հուլիսի 1934 թ.
Ստորագրված է տպելու 23 հուլիսի 1934 թ.

Ամերիկայում կա Սեմմիտ անունով մի փոքրիկ քաղաք: Մի որ այս քաղաքը յեկան յերկու գող — Բիլլն ու Սամը:

Ահա հյուրանոցի շեմքին նստած նրանք մտածում են իրենց կատարելիք գործի մասին:

— Հիմա քիչ փող ունենք, — ասում է Բիլլ, — ընդամենը վեց հարյուր դոլլար: Հարկավոր է փող ձեռք բերել, իսկ ի՞նչ կարելի յե այստեղ գողանալ: Փողը Բոլդի մոտ յերկաթե արկղների մեջ է պահված, բոլոր բնակարանները ցանկապատված են, անասուններին աչքը չորս արած են հսկում: Միայն յերեխաներն են առանց հսկողութեան վազվզում:

— Ե՛, — ասում է Սամը, — կարելի յե և յերեխաներ գողանալ. այ, ժլատ Դորսեան ունի մի տղա. նա կլինի մոտ տասը տարեկան, շիկահեր ու պեպենոտ դեմքով: Գողանանք նրան, իսկ հետո Դորսեանին նամակ

գրենք, թե՛ յեթե ուզում ես, վոր տղայիդ վերադարձնենք, մեզ պետք է տաս յերկու հազար դոլլար: Այ, այս գործի մեջ մենք լավ փող կաշխատենք:

— Ե՛խ, — ասում է Բիլլը, — յես շատ դուրս յունեներ եմ արել, քսակներ եմ գողացել, մորթե պիտակներ եմ թոցրել, յուզով վրը տակառներ, ձիեր, փոսկե մատանիներ, բայց տես՝ յերեխա դեռ չեմ գողացել: Լավ, արի փորձենք:

* * *

Իրիկնադեմին Դորսետի տանը մտանում եր մի ձիասայլակ: Դորսետի տղան վազվզում եր փողոցներում և ցանկապատերի վրա ցատկտող կատուների՝ վրա քարեր նետում:

— Ե՛յ, տղա, — կանչում է սայլակում նստած Բիլլը, — նստի՛ր մեր կողքին. մենք քեզ ինչպես հարկն է ման կածենք և քաղցրեղենով կհյուսկասիրենք:

Տղան խկույն նշան գրավ և յուր ձեռքում յեղած աղյուսի կտորը նետեց Բիլլի վրա. քիչ եր մնում նրա աչքին խփել:

— Հը՛մ, լավ, — մտածում է Բիլլը, — այդ քո արածը հաշվի մեջ չի մտնում, դրա համար

քո հայրը մեզ մի հինգ հարյուր դոլար ել
ավելի կվճարի:

Բիլն ու Սամը բռնեցին տղային և քարշ
տվին դեպի սայլակը: Տղան թրպրտում եր
փոքր արջի պես, Բիլը պինդ բռնել եր
նրան, իսկ Սամն արագությամբ քշում եր
ձին:

— Միայն թե շուտով քաղաքից դուրս
գանք, — ասում ե Սամը, — այնտեղ հեռվում
մի հրաշալի քարայր կա, տարիներով ել
մեզ փնտրեն, չեն գտնի:

ՏԱԳՆԱՊԻ ԳԻՇԵՐ

Այրի մեջ ճրթճրթալով վառվում եր
խարուչիկը. կրակի վրա կախված եր սրճա-
մանը: Սուրճն արդեն պատրաստ եր:

— Իե, տղա, չվախենաս, մենք քեզ վոչ
մի վատ բան չենք անի, — ասաց Բիլը, փետ-
րելով իր ձեռքի մեջ թփրտացող հավը:

— Իու ինքդ չվախենաս, — պատասխանեց
տղան. — մենք հիմա պիտի հնդիկների խաղը
խաղանք: Հնդիկները վոչ մի բանից չեն
վախենում. նրանք վորսում են վայրի
գազաններ, պատերազմում են գայկազեմ
մարդկանց դեմ և գիշերում քարայրներում:

Հավի փետուրները տուր ինձ. հնդիկները
պլխարկներ չեն դնում. նրանք միայն փե-
տուրներ են ամրացնում մազերի մեջ:

— Հավ, յեթե ցանկանում ես, խաղանք,
— ասում է Բիլլը:

— Ի՞նչ կլինես ծերունի Գազանասպանը,
իսկ Սամին յես կանվանեմ Ոճալին աչք:
Յես — կարմրամորթների սուաշնորդն եմ,
հովիտների փոթորիկը: Յես ձեզ յերկուսիդ
գերի յեմ վերցրել: Արշալույսը բացվելիս
յես Սամին կայրեմ կրակի վրա, վորով-
հետև նա դալկադեմների լրտեսն է, իսկ քո
դանդի մաշկը կքերթեմ¹⁾: Իսկ այժմ յես
քեզ պիտի տանջեմ:

Տղան սկսեց բուռնցքներով խփել և ա-
ջացի տալ Բիլլին: Հագիվ-հագ կարողա-
ցան նրան հանգստացնել:

**
*

Նստեցին ընթրիքի: Տղան ազահաբար
հացը ճխտել էր բերանը և միաժամանակ
անդադար շատախոսում էր:

— Ես լավ ե: Յես դեռ յերբեք չեմ գի-

¹⁾ Հյուս. Ամերիկայի հնդիկների մեջ համարվում
է հազթուրթյան նշան:

չերել խարույկի մտա: Բայց գիտեք, յես
 առաջ մի թուլթակ ունեյի, այ թե ծիծա-
 ղեցնում եր նա: Յես արդեն տաս տարե-
 կան եմ: Տանել չեմ կարող, յերբ ինձ ասում
 են՝ գնա դպրոց: Իսկ այստեղ անտառում
 կան խկական հնգիկներ: Ինձ մի քիչ ել
 ապուխտ տվեք: Ինչից ե քամի առաջա-
 նում: Յերևի նրանից, վոր ծառերը շարժ-
 փում են: Իմ հայրը շատ փող ունի: Եյ,
 դու, Գազանասպան, ինչո՞ւ յե քիթդ կարմիր:
 Տանել չեմ կարող աղջիկներին: Ինչո՞ւ նա-
 րինջները կտր են: Ինչո՞ւ յերկու անգամ
 յերկու հավասար ե չորսի:

Հնթրիքից հետո Բիլը և Մամը սկսեցին
 ծխել: Հանկարծ տղան այնպես աղաղակեց,
 վոր Մամի բերանից տրուբկան վայր ընկավ,
 իսկ Բիլը շփոթվեց և ծուխն սկսեց խեղդել
 նրա կոկորդը:

— Ի՞նչ ես գոռում, — հարցրեց Բիլը:

— Հնգիկները կովի ժամանակ այնպես
 են գոռում, վոր մի վերստ հեռավորության
 վրա լսվում ե նրանց ձայնը: Թողեք այրից
 դուրս գամ և տեսնեմ՝ այստե՞ղ են գալիս
 այդ անախտան դալկադեմները:

— Իսկ դու չե՞ս ուզում տուն գնալ:

— Ինչո՞ւ գնալ: Տանը տխուր ե: Ավելի

լավ ե գիշերել խարուկի մոտ: Յես գիտեմ,
դու ուզում ես ինձ տուն տանել, Ոճային
աչք: Կարող եք շանհանգստանալ, հարկա-
վոր չե:

— Թող այդպես լինի, — ասում ե Սա-
մը, — առայժմ մնա մեզ մոտ:

— Եհ, ինչ հիանալի յե: Յես յերբեք կյան-
քիս մեջ այսքան ուրախ չեմ յեղել:

— Տեսնում ես, Բիլլ, ինչպես ամեն ինչ
հաջող ե ընթանում, — ասում ե Սամը, —
տղան շատ գոհ ե. այնպես վոր նրան նույն-
իսկ հսկել ել հարկավոր չե:

* *
*

Պատկեցին քնելու: Վերմակը փոեցին
գետնին: և տղային տեղավորեցին իրենց
մեջտեղը: Հենց նոր եր Բիլլն սկսել խորմ-
փացնել, յերբ տղան հանկարծ գոռաց ու-
ղիդ նրա ականջի մեջ.

— Վերտեղ ե իմ հրացանը: Յես ու-
զում եմ գնալ հետախուզության, այլապես
դալկադեմները կհարձակվեն մեզ վրա:

Վերջապես տղան ել քնեց:

Յերագում նա տեսնում եր հնդիկների
և դալկադեմների կռիվը: Բիլլը յերագում
տեսնում եր, թե ինչպես շեկ ավազակը



իրեն ծառին ե կապել. իսկ Սամբ յերազում տեսնում եր յերկու հազար դոլլար: Լուսաբացին Սամն արթնացավ գարհուրելի ձայնից: Հաստ Բիլը ճշում եր քառասուն փոսնանի գազանից վախեցած աղջկա նման: Բիլը մեջքին նստել եր «կարմրամորթների առաջնորդը»: Մի ձեռքը նա մտցրել եր Բիլը մազերի մեջ, իսկ մյուս ձեռքով բռնել եր մի սուր դանակ, փորով նրանք միշտ ապուխտ եյին կտրտում:

— Մի շարժիր պուխդ, — բղավում եր տղան Բիլը վրա, — յես պետք ե քո գանգի մաշկը քերթեմ:

Սամբ դանակը խլեց տղայի ձեռքից: Բուրբը նորից պառկեցին:

Բիլը պառկած եր բայց աչքերով. Սամբ նույնպես քնած չեր. նա վեր կացավ և սկսեց ծխել:

— Ինչո՞ւ դու այդպես վաղ ես արթնանում:

— Ճիշտ, չգիտեմ, — ասաց Սամբ, — կարծես ցավում ե մեջքս. ինձ թվում ե ավելի լավ կզգամ, յեթե նստեմ:

— Սուտ ես ասում, — ասաց Բիլը, — մեջքդ չի ցավում: Ինչ վախենում ես, ուրիշ վոչինչ: Տղան խոստացել ե լուսադե-

մին քեզ այրել: Տեսնում ես՝ նա լուցկի յե
փնտրում, լավ ե, վոր յես լուցկին գրպա-
նումս եմ պահում... Եհ, Սամ, մի՞թե
վորեւ մեկը այս շառլատանի համար վող
կվճարի մեզ:

— Յերևակայիր, Բիլլ, — ասաց Սամը —
այսպիսի չարածճիներին ծնողներն ավելի
շատ են սիրում: Դեհ, վեր կացեք, դու և ա-
ռաջնորդն սկսեցեք նախաճաշ պատրաս-
տել իսկ յես կբարձրանամ փոքրիկ բլուրը,
տեսնեմ՝ հո մեր կողմերը մարդ չի՞ գալիս:

ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ

Սամը կարծում էր, թե քաղաքում հրա-
կայական իրարանցում ե տեղի ունեցել, ա-
մեն կողմ վորոնող մարդիկ են վազվզում,
հեռագրեր են ուղարկվել տղային հափշտա-
կող ավազակներին գտնելու համար...
Բայց շրջակայքում ամեն ինչ լուռ էր:

— Ա, յերևի գեռ չեն զգացել դեպքի լըր-
շությունը, — յենթադրեց Սամը:

Վերադառնալով քարայրը, Սամը տեսավ,
վոր Բիլլը մեջքը քարի պատին ամուր սրղ-
մած կանգնած ե ե հազիվ ե շնչում:

— Ի՞նչ ե պատահել, — հարցրեց Սամը:

— Լսիր, Սամ, այս անպիտանը տաք
կարտոֆիլը դրեց վզակոթիս, բարձրացավ
վրաս և սկսեց վտառելով ամուր սղմել: Յես
նրա ականջները քաշեցի. եհ, ի՞նչ ես կար-
ծում, միթե դա կոպի: Ատրճանակ չու-
նե՞ս, Սամ:

— Ի՞նչ դեռ ինձնից նոր հարվածներ կըս-
տանաս, — սպառնում եր տղան, — վոչ վոչ
դեռ չի համարձակվել խփել կարմրամորթ-
ների առաջնորդին:

Յեվ նա սկսեց փայտի կտորներից և
ռետինից ինչ-վոր բան պատրաստել:


— Եհ, Բիլլ, քաղաքում դեռևս փրկե
տագնապ չկա, — ասաց Սամը. — Իդրսետը
յերևի կարծում ե, թե տղան գիշերել և մո-
րաքույրերից մեկի կամ հարեանների մոտ:
Անհրաժեշտ ե նրան նամակ դրել:

ԱՆՎԱԽ ԲԻԼԼԸ ՎԱԽԵՑԱՎ

Հենց այդ ժամանակ կարմրամորթնե-
րի առաջնորդը քար եր շարտում Բիլլի վրա:
Քարը, վոր հազիվ ձվի մեծության լինելը,
կպավ Բիլլի ձախ ականջին: Բիլլը խոր մորն-
չաց ինչպես ձի, յերբ նրա վտառելից պայ-
տերն են հանում, և ընկավ ուղղակի խա-



12451



բույկի վրա, յերեսը կպավ տաք ջրով վերը կախսային: Մամն իսկույն ևեթ քաշեց Բիլլին կախսայի վրայից և սկսեց սառը ջուր ցանել նրա յերեսին և ուշքի բերել:

Կես ժամից հետո Բիլլը սթափվեց: Նա նստեց և սկսեց շոշափել ձախ ականջի վրա առաջացած ահագին ուռուցքը:

— Մամ, — տաաց Բիլլը, — դու լսե՞լ ես Իրոզ Թագավորի մասին:

— Ի՞նչ գլխում ամեն ինչ խառնվել ե, վոչինչ, շուտով կանցնի, — տաաց Մամը, — դու ինքդ չգիտես, Թե ինչ ես ասում:

— Յես լսել եմ, վոր հնում Իրոզը հազար յերեխա յե սպանել, — շարունակեց Բիլլը, — ինչքան խելացի և լավ մարդ և յեղել նա. . . Մամ, չհեռանաս և ինձ մենակ չթողնես:

Մամը բռնեց տղային և սկսեց համոզել նրան:

— Դու յերևի տուն գնալ ես ուզում, վոր քեզ այդպես վատ ես պահում:

— Յես միայն խաղում եյի, — համառեց տղան: — Յես այլևս հնդիկների խաղը չեմ խաղա. խնդրում եմ, ինձ տուն չուղարկես, Ռձային աչք: Յես հիմա պետք ե խաղամ հետախույզների խաղը:

— Հաշտփիր Բիլլի հետ, — ասաց Սամբը, — դու կմնաս նրա մոտ: Խաղացեք քարայրում, իսկ յես պետք ե գնամ:

— Իուզ գիտես ինձ, Սամ, — բացականչեց Բիլլը, — յես վախկոտ չեմ: Յես քեզնից յերբեք հետ չեմ մնացե: Մենք ամեն տեսակ դժբախտությունների դեպքում միասին ենք յեղել: Յես ականատես եմ յեղել յերկրաշարժների, ստորերկրյա պայթյունների, գնացքի կողոպուտների, նույնիսկ վոստիկանական խուզարկությունների և յես յերբեք վոչ մի բանից չեմ վախեցել: Բայց այս փոքրահասակ գոմեշից, այս յերկու վոտանի ըմբից — յես վախենում եմ: Մի թողնիր ինձ, Սամ:

— Յես կվերադառնամ իրիկնադեմին, — պատասխանեց Սամբը: — Խաղա նրա հետ մինչև իմ վերադառնալը, իսկ հիմա արի նամակ գրենք Իորսետին:

* * *

— Մի պահանջիր յերկու հազար դոլլար, Սամ, թող Իորսետը տա թեկուզ մեկ-ե կես հազար դոլլար, — աղաչում եր Բիլլը: — Յես, իհարկե, հավատում եմ, վոր Իորսետը սիրում ե յերեխային, բայց այնուամենայ-

նիվ հանկարծ յեթե նա չտա յերկու հա-
զար դոլլար, ի՞նչ կանենք մենք այս դադա-
նին: Ավելի լավ ե ոխակ անենք մեկ և կես
հազարի համար: Յես քեզ հետո կվերադարձ-
նեմ հինգ հարյուր դոլլարն իմ դրամու-
րից:

Սամը զիջեց և դրեց նամակ հետևյալ
բովանդակությամբ.

Բանկիր Գորուեսին.

Ձեր տղան մեր ձեռքին է: Նա գաղտնի տեղ
է գտնվում, քաղաքից հեռու: Ամենալավ լը-
սեսներն անգամ չեն կարող ձեզ ոգնել:

Մեր վերջնական պայմաններն են. — Մենք
ձեր տղային կվերադարձնենք ձեզ, յեթե դուք
յերեկոյան ժամը 10-ին ծրարի մեջ հազար հինգ
հարյուր դոլլար դրած՝ կզնեք Սիվիլյան հան-
գույցի ցանկապաշի առաջին սյունի հետեվը:

Յեթե դուք չհամաձայնվեք վճարել, յերբեք
չեք տեսնի ձեր վորդուն: Յեթե դուք կվճարեք մեր
պահանջած գումարը, այդ դեպքում մենք ձեզ կվե-
րադարձնենք ձեր տղային կենդանի յեվ անվնաս:

Յերկու անվախներ:

Սամը զնաց նամակը փոստարկդ ուցելու:
Տղան անմիջապես թուով և Բիլլի մեջ-
քին նստեց:

— Դու իմ ձին ես, իսկ յես հետախույզ
եմ: Յես քեզ վրա նստած պետք ե գնամ
իննսուն վերստ տարածություն, փորպեսզի
նախազգուշացնեմ գաղթողներին, փոր հըն-
դիկները պատրաստվում են հարձակվելու
նրանց վրա: Դեհ, մեկնվիր չորքոտանու
նման և վազիր:

Բիլլը ձեռքերը գետնին զնելով, չորքո-
տանի դարձափ Տղան ակսեց փոռքերով
խփել նրա կողերին:

— Այ, տես, յես քեզ վարժեցնում եմ, —
խոսեց տղան:

— Նորից կովել, — հառաչեց Բիլլը: —
Յես այլևս չեմ կարող... Յեվ ինչո՞ւ մենք
պահանջեցինք մեկ և կես հազար, պետք է
հազար դոլար խնդրեցինք:

ԲԻԼԼԸ ԶԿԱՐՈՂԱՏԱՎ ԴԻՍԱՆԱԼ

Յերբ Սամը վերադարձափ, փոչ Բիլլը և
փոչ տղան քարայրում չեյին: Կես ժամից
հետո թփերի տակից կաղալով դուրս յե-

A 7 988



կամ Բիլլը: Նրա դեմքը արյունոտված էր,
բայց նա ուրախ քայլում էր:

— Սամ, — սասց Բիլլը, — դու կարող
ես ինձ դավաճան համարել, բայց յես այլ
ես չեմ կարող ինձ դապել: Իմ համբերու-
թյունը հատաւի:

— Ի՞նչ ե պատահել Բիլլ, — հարցրեց
Սամը:

— Եղ տղան հարկադրեց ինձ չորքոտա-
նուս նման վազել ամբողջ ճանապարհը և
վոչ մի վերջոկ չգիշեց: Հետո նա ինձ կե-
րակրեց ավազով և սասց, վոր խոտ ե: Հե-
տո նա սկսեց ինձ հարցնել. — ինչո՞ւ յե
Ղուրը թաց, ինչո՞ւ յե խոտը կանաչ: Յե՛վ
տհա յես չկարողացա ինձ դապել: Յես
ցույց տալի նրան իր հոր մոտ գնալու ճա-
նապարհը և նրա վզակոթին մի այնպիսի
հարված հասցրի, վոր նա մի անգամից մեկ
սաժեն հեռավորութեան վրա ընկավ: Հիմա
ամեն ինչ վերջացած ե, նա յերևի արդեն
տանն ե: Ափսոս, իհարկե, վոր մենք չենք
ստանա դրամը: Բայց ի՞նչ անեյի:

Բիլլը շնչակտուր փափսում էր. քրը-
տինքը ծորում էր դեմքից, բայց նրա աչ-
քերը փայլում էին ուրախությունից:

— Բիլլ, — հարցրեց Սամը, — ձեր ընտա-

նիքում վոչ վոք չի՞ մեռել անսպասելի վա-
խից:

— Վոչ, — պատասխանեց Ռիլը, — յես
այդպիսի հիվանդության մասին նույնիսկ
չեմ ել լսել:

— Ուրեմն հետ դարձիր:

Հանկարծ թփի տակից դուրս պրծավ
տղան:

Ռիլը արունը գլխին խփեց. նա մեծ
ծանրությամբ պառկեց գետնին և սկսեց,
հայտնի չե ինչու, խոտ պոկոտել և փայտի
կտորներ հավաքել: Նրա ձեռքերը դողում
էին:

ՄԵԾԱՀՈԳԻ ԴՈՐՍԵՏԸ

Ժամը տասին մոտ Սամը գնաց Սիվին-
յան հանգույցը. ցանկապատի առաջին սյան
հետևը իրոք վոր կար մի ծրար:

— Ուռն, — բղավեց Սամը, մոտենալով
բարայրին, — ահա փողով վրը ծրարը: Այս
բողոքիս տղային տուն կտանենք:

Նա ծրարը բաց արավ և միջից դուրս
յեկավ վոչ թե Սամի սպասած դրամները,
այլ միայն նամակ:

Սաացա ձեր նամակը: Դուք տղայիս ազատեցիս համար պահանջում եմ մեկ յեզ կես հազար դոլար: Յես ձեզ վոչ մի գրոց չեմ տա: Իսկ յեթե դուք կվհարեմ ինձ 250 դոլար, յես կհամաձայնեմ ընդունել յերեխայիս: Բայց յեկեմ այն ժամանակ, յերբ կսկսի մթնել: Հարեվանները հույս ունեն, վոր տղան չի վերադառնալու յեթե նրանք տեսնեն, վոր դուք նրան տուն եմ բերում, նրանք ձեզ կսպանեն:

Յեթե դուք խմ առաջարկած պայմանին համաձայն չեմ, տղան ընդմիտ կմնա ձեզ մոտ:

Դորսե:

Ինչ խայտառակութուն, — գոչեց Սամր — Սամ, — ասաց Բիլլը, — ե, ինչ մեծ բան ե 250 դոլարը: Մենք փող ունենք: Իմ կարծիքով, Դորսետը բավական մեծահույժ մարդ ե. նա մեզանից շատ քիչ ե պահանջում: Մի՞թե մենք այսպիսի հարմար առիթը պետք ե ձեռքից բաց թողնենք:

— Ճիշտն ասած, ես գաղանն ինձ ել ե սաստիկ ձանձրացրել, — ասաց Սամր: — Տանենք նրան տուն, վճարենք դրամը և ազատվենք:



Մամբ տղային իր մոտ կանչեց:
 — Հայրդ քեզ համար հրացան ե գնել, —
 ասաց Մամբ, — ուղճում ես տուն գնար
 — Յերբեր, վո՛չ մի դեպքում, — պատաս-
 խանեց տղան:
 — Հրացանն արծաթե փող ունի:
 — Միկնույն ե, չեմ գնա:
 — Իու կգնաս տուն միայն հրացանը
 վերցնելու համար, — ասաց Մամբ, — վաղը
 մենք միասին կգնանք արջ փորսալու:
 Մամբ կարողացավ համոզել նրան:

* * *

Ուղիղ կես գիշերին Մամբ և Բիլլը Դոր-
 սետի դուռը ծեծեցին:

Դորսետը դուռը բաց արավ, փողը վերց-
 րեց և սկսեց հաշվել:

— 250 դոլլար. ճիշտ ե, — ասաց նա: — Եհ,
 թող այդպես լինի, փոչինչ չեմ կարող
 ասել, տվեք յերեխային:

Յերբ տղան հասկացավ, վոր Բիլլն ու
 Մամբ ուզում են իրեն տանը թողնել,
 սկսեց զոռալ ինչպես շոգենավի սուլոց և
 ձյութի նման կպավ Բիլլի վոտքերին:

Հայրը մեծ դժվարութեամբ պոկեց նրան
Բիլլի փոսքերից:

—Ինչքան կարող եք պահել,—ասաց Բիլլը:

—Յես հիմա այնքան ուժեղ չեմ, վոր-
քան առաջ,—պատասխանեց ծերունի Դոր-
սետը,—բայց տասը ընդհանրապես կարծում եմ,
կարող եմ պահել:

—Հերիք ես,—ասաց Բիլլը,—տասը ըն-
դհանրապես յես կփախչեմ աշխարհի մյուս
ծայրը:

Յե՛վ Հնայած Թանձր խավարին, հաստ-
լիկ Բիլլը սլանում էր նապաստակի պես,
խակ նրա հետևից, հազիվ-հազ նրան հաս-
նելով, վազում էր յերկարտոն Սամբ:





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0046124



[Объ.]

4122 30 400.

A I
8248

